

Ե Ղ Ի Զ Է Չ Ա Ր Ե Ն Ց

ԱՄԲՈԽՆԵՐԸ ԽԵԼԱԳԱՐԻԱԾ

Պ Օ Ւ Մ

ԹԻՖԼԻՍ - ՌԴՃՇ - ԱՊՐԻԼ

յաշերք ու արեգութեան  
առեւ զարդարեան  
ՏԵՂ/Տ/ՀՅ. Կոմ.

ԵՂԻՇԵ ԶԱՐԵՆՑ

# ԱՄԲՈԽԱԵՐԱԾ ԽԵԼԱՎԱՐԼԱԾ

ՊՕԷՄ

ԹԻՖԼԻՍ - ՌԴԺԹ ԱՊՐԻԼ



## ԱՄԲՈԽՆԵՐԸ ԽԵԼԱԳԱՐԻԱԾ

1

Հեռու, մօտիկ ընկերներին, —աշխարհներին, արևներին, —  
հրանման հոգիներին: —

Բոլոր նրանց, ում որ հոգին վառում է վառ, —  
Բոլոր նրանց հոգիներին արևավառ: —  
Կեանքի, մահի այս ամեհի աղջամուղջում՝  
ողալիզւող հոգիներին —ողջյն, ողջյն... .

2.

Իրիկուն էր, հրակարմիր մի իրիկուն: Արեր, բորբ, մայր էր մտնում արևամուտքում:  
Դաշտի վրայ փռել էր մուժ արիւնամած՝  
թոյն էր կարծես՝ բորբ արեի սրտից քամած:  
Արեր, թէժ, մայր էր մտնում արևամուտքում—  
ու արիւն էր դաշտի վրայ, թոյն էր թքում:  
Հորիզոնում վառել էր մի կարմիր քուրա—  
ու արնավառ փայլ էր սփոռում դաշտի վրայ:  
Ու արտերը, ալեծածան, վառել էին  
արեգակի կարմիր փայլով իրիկնալին: —  
Դաշտը, անծայր ու անսահման, լայնատարած՝  
հրակարմիր տարածւել էր նրանց առաջ: —  
Ծով էր կարծես, որ սկիզբ ու սահման չունի—  
ծով էր կարծես՝ մշուշի մէջ իրիկունի... .

Արեկի տակ իրիկնային, իրիկնային տենգով վառւած՝  
այդ հին դաշտում կուռում էին ամբոխները խելագարւած:

Քաղաքներից ու գիւղերից, ստէպներից հեռու ու մօտ՝  
եկել էին նրանք նորից՝ յուսավառւած ու կրակոտ...

Ով քաղաքից էր հեռացել—նա թողել էր մշուշը ծեր,—  
մշուշը, որ կեանքի վրայ մխաշաղախ ամպ էր դարձել:

Ով եկել էր գիւղից հեռու—նա թողել էր հողը խոնաւ,  
որի վրայ կեանքը հուռ ոչ մի ոսկի հասկ չը ծնաւ:

Ով եկել էր ստէպներից, նա թողել էր անծայրածիր  
լայնութիւնը հորիզոնի, որ իր համար բանտ էր դարձել:

Ով քաղաքից էր հեռաւոր, ուր մառախուղ էր անորոշ—  
նա բերել էր թոքախտաւոր սիրալ, որպէս կարմիր գրօշ:

Ով եկել էր, թողած հեռուն անծայրածիր մութը գիւղի՝  
բերել էր իր մկաններում բնդմնաւորւած ուժը հողի:

Ով եկել էր ստէպներից, ուր ապրում էր որպէս գերի—  
բերել էր իր լուրթ աչերում լայնութիւնը ստէպների...

Հմբոստացած, խելագարւած, չը տանելով հին կեանքը էլ՝  
անծիր դաշտում այս հաւաքւած նրանք կուի էին ելել...

Մայր էր մտնում իրիկնային արել՝ թէժլոյսով վառւած:—  
Ու երգելով կուռում էին ամբոխները խելագարւած:—

Դաշտն իր դէմը՝ փոււած էր նա՝ շառագունւած ու արեսուն,—  
ու հեռուում, ճամբի վրայ, հակայ քաղաքն էր երեսում:—

Ծնյլ նազանքով, իրիկնային արեի տակ անփոյթ փոււած՝  
պսպղում էր քաղաքը հին հազարերանդ մի զանգըւած:

Հեռու, հեռու, անծայր ու լայն, տարածւել էր քաղաքը հին—  
լողանում էր կարծես մարմանդ մշուշի մէջ իրիկնային։  
Յաղթ շէնքերը, բարձր ցցւած, կարծես կախւած կարմիր օղում  
հեարդիետէ մթնում էին, անգունանում ու աղօտում։  
Հեռու հրով միայն վառւած պատուհանները ապակի  
փայլում էին արիւնամած վերջին հրին արեգակի։  
արեկի դէմ փայլում էին հրաբոսոր՝  
բողնկւել էր նրանց սրտում տագնապը սուր. . .  
Ու երկնահուալ զմբէթների ոսկի խաչերը հրագոյն  
հետդիետէ մարում էին իրիկնային լուրթ երկընքում։  
Եւ երկընքի սիրտը մխւած ըևեւների ան արնաքամ՝  
փայլում էին արիւնամած ծինելոյզանց ամիայական։  
Ծուխ չէր ելնումնրանց փողից, չէին փնչում երկինքն ի վ  
չէր կարծրանում նրանց ծուխից իրիկնային երկինքը էլ...  
կոկ մշուշը իրիկնային թանձրանում էր հետդիետէ—  
ու մշուշում կորչում էին ծինելոյզները երկաթէ. . .

## 5.

Իսկ քաղաքից դէպի հարաւ՝ գուղձերի մօտ քանկած հողի՝  
երկում էր հսկայական կայարանը երկաթուղու։  
Լուսում էր մերթ շրգեկառքի սուլոցը սուր հեռու մուժում—  
մորթում էին կարծես այնտեղ խելագարւած մի անասուն...  
Ճշում էր սուր, յուսակտուր, ու յուսահատ ձայնը նրա,  
որպէս անգարձ մահի մի լուր տարածւում էր դաշտի վրայ. —  
Ցցւած էր նա, կայարանը, հսկայ ու յաղթ, նրանց առաջ. —  
Ու հանգոյցից կայարանի, դաշտովը մէկ լայնատարած՝  
դէպի հիւսիս, դէպի հարաւ, ու արևմուտք, ու արևելք—  
ուղիները երկաթագիծ ձգւել էին ամենուրեք. —  
երակների պէս երկաթէ քաղաքամօտ կայարանից

հեռու, հեռու ձգւել էին ուղիները երկաթաղիծ:  
Երակների պէս երկաթէ՝ ամուր գըրկած կուրծքը հողի՝  
սեղմըւեղլվ հետզհետէ փախչում էին գաղտագողի...  
Ու ցցւած էր ուղիների խաչակնքման սեղմ հանգոյցում —  
կայարանը, որպէս մի հարց, որպէս հսկա մի քարացում:  
Ուղիների ճամփամիջում հանգոյց էր նա կարծես կապւած —  
ու անզիջում կուռում էին ամբոխները խելագարւած:  
Փշում էր մեղմ, մարմանդ մի հով բարակ սուրում էրհարաւէն, —  
գնում էին կուռվ, երգնվ, որ կայարանը գրաւեն...  
Կուռում էին: Սուրում էր մի իրիկնային, մարմանդ քամի:  
Դա քազաքն էր տարածւել՝ հազարամեայ մի թշնամի:  
Օվինքի պէտ էր արեակամ ամբոխների կարմիր ուղին...  
Նա կը արեակամ ամբոխների կարմիր ուղին...  
Ու կայարանը՝ յաղթանգամ, իրիկնային կարմիր մուժում,  
յաղթ նստել էր նրա առաջ, որպէս նրան հսկող մի շուն: —  
Յաղթ նստել էր նրա առաջ ու տիրուհու կամքին գերի՝  
երթն էր հսկում գետնատարած, երկաթագիծուղիների: —  
Ու քիչ մօտիկ կայարանին՝ խաչածնած երկայնքն ուղու՝  
դաշտի վրայ ձգւած կային երկայն շերտեր քանդած հողի: —  
Թշնամին էր պահւել այնտեղ, ուր հողը թաց, խոնաւ էր գեռ՝  
փորել էր նա դէմը, այնտեղ երկայնաձիգ խրամատներ: —  
Փորել էր ջերմ կուրծքը հողի, հողի սրտում դարան մտած՝  
կրակում էր գաղտագողի, նենդ ձեռքերով արինոտած:  
Փորել էր և իրա առաջ հող էր գարսել, ու ցեխ, ու քար —  
բայց ոչ մի դիրք հողում փորած չի պաշտպանի մարդուն երկար...  
Կուռում էին՝ մօտենալով, մօտենալով հետզհետէ:  
Պայթում էին զընգալով հրանօթները երկաթէ...  
Երդ էր կարծես կոփւը այդ, որ զնզում էր մայրամուտում.  
Նայես՝ թշուաւ մի հրանօթ ու թունդ պայթեց խրամատում... .

ուստի դանդա՞մ ամեն անձը ճարպայից գոված անց իւ զմեն զմեն  
Սպասում էմք զմզու բժանակ անու հայուն չ ունեն նացան դիմ  
մաքր մաքանաբան զընդունածա այս թափ նույս առխան միշտ  
Աթահան առաջ նաև ամ 7. մն զմ նառաջ աղջանարն ալ

Կուռում էին, ու կուելով անցնում էին նրանք առաջ։  
Ու գաշտերում իրիկնային ման էր քրքջում համատարած։  
Երգում էր նա՝ երգը խառնած հրանօթի զրբնգունին, —  
անցնում էին նրանք առաջ ու կրակւած կուռում էին։  
Երգ էր սիրաը ամեն մէկի, երգ էր հայեացքը կրակոտ։  
Վառում էր սիրաը ամենքի, որպէս կարմէր մի տառօտ։  
Երգ էր կարծես արել հին՝ չըեկնային լոյսով վառուած։  
ու երգելով կուռում էին ամբոխները խելագարւած։

8.

Եւ երգում էր մէկը՝ հզօր, հուժկու ձայնով ահեղագոչ,  
զնվեն էր երգում կուի ելած, արիացած իր ընկերոջ։  
Որպէս բազէ՝ երգը նրա սլանում էր հեռու, հեռու—  
ու երգելով կուռում էր նա՝ լուսաժաղիտ ու ահարկու։  
Երգում էր նա: Մայր էր մանում արել հին՝ կարմիր քուրա։  
Ու գաշտերում իրիկնային— զանդ էր կարծես ձայնը նրա։  
Զանդ էր կարծես, զանգում էր զիւ, որ ողջ աշխարհը իմանա—  
բորբ կարօտով անծայրածիր, կրակելով երգում էր նա։

9.

Ատէպներից, անտառներից, քաղաքներից հեռու ու մօտ—  
մենք մեր սիրտն ենք բերել նորից՝ յուսավառւած ու կրակու։  
Ալստեղ հիմա կոիւ է, մահ, ու աղջամուղջ է անորոշ։

մենք մեր սիրտն ենք պարզել հիմա՝ մահի հանդէպ կարմիր դրօշ։  
Արիւնաքամ մայր է մանում ահա այստեղ արել հին։  
արիւնավառ ժպտում է մեզ այս աշխարհը իրիկնային...  
Ու խնդասիրտ կուռում ենք մենք, երգ ենք ասում կուռում հիմի։  
կուրծք է տւել աշխարհը ողջ հազարամեայ մի թշնամի...  
Բայց անվլինատ կուռում ենք մենք, ու մահը, սէգ, ժպտում է մեզ -  
շատերըս, ախ, պիտի զոհենք սրտերը մեր կարօտակէզ։ —  
Անողոք է երթը այս սէգ, որպէս կարմիր կարօտը մեր —  
կրակեցէք, կրակեցէք, խելագարւած իմ ընկերներ...»

## 10.

...Մայր էր մանում իրիկնային արել՝ թէժ լոյսով վառւած։  
Ու անվլինատ կուռում էին ամբոխները խելագարւած։  
Աչքերի մէջ՝ կարմիր մի հուր, ու սրտերում — կարմիր կրակ՝  
վերջին թափով մի ամրակուռ՝ անզայթ կուռում էին նրանք։  
Խենթ երգելով, կրակելով նրանք անցնում էին առաջ —  
ու թշնամին փախուստ տւեց՝ ահաբեկւած ու վտարուծ։ —  
Մութ էր արդէն, մայր էր մտել արեգակի շողը վերջին,  
երբ գրոհով մի անվեհեր կայարանը գրաւեցին...»

## 11.

Մութ է հիմա։ Գիշերը, խոր, իջել է վար։  
Մութ է հիմա, թանձր խաւար։  
Երկաթուղու կայարանում, ուր ոչ մի լոյս չըկայ վառւած,  
խոնըւել են հազարամուն ամբոխները խելագարւած։ —  
Գիշերի մէջ չեն երևում յաղթ կամարները երկաթէ։

Ըոյս չեն վառել կայարանում, որ թշնամին չընկատէ: Ապասում են՝ աչքերն յառած խաւարամած հեռուներին՝  
մութը իջաւ համատարած, մինչ կայարանը վերցըրին: —  
Սպասում են, որ մինչև լոյս գոնէ մի քիչ հանգստանան—  
ու առաւօտ դուրս գան նորից և քաղաքի վրայ գնան:  
Աչքերն յառած թանձր մութին, սրտատրոփ, անապաքէն՝  
սպասում են առաւօտին, որ կոփոք շարունակեն:  
Մի քիչ առաջ, արիւնաքամ, երբ դեռ դաշտում կուռում էին —  
մօտ էր թւում քաղաքն այնքան երկաթուղու կայարանին...  
եկան իրենք, կուռվ, երգով զրաւեցին կայանը մեծ—  
իսկ թշնամին փախուստ տւեց ու քաղաքում առ տրսպուեց:  
Սպասում են իրենք հիմա, որ մինչև լոյս հանգ առանան...  
ու առաւօտ դուրս գան նորից և քաղաքի վրայ դնան...

## 13.

Ու մթի մէջ հազարամեայ, գիշերի մէջ խորը, անհուն՝  
խառնել են նրանք ահա երկաթուղու կայարանում,  
Դաշտն է գէմը՝ խաւարակուու ձգւած է նա:  
Զրկայ մի ձայն, չըկայ քամի— մութ է հիմա:  
Դաշտն է գէմը՝ անծիր, անծայր մի զանգըւած խաւարամութ,  
ուր նստել է անչք, անլոյս, խորհրդաւոր կասկածը մութ:—  
Շնթոկել է, որպէս մի շուն, ու խաւարն է հսկում հիմի, —  
շնթոկել է թանձր մութում, որպէս անտես մի թշնամի:  
Մութ նստել է կասկածը հին ու աչքերով խաւարամած  
նայում է նա կայարանին, որ կանգնած է իրա դիմաց:  
Շարժըւում է մութը կարծես, ու խաւարով իր աչքերի—  
նայում է նա լուրիթ աչքերին խելագարւած ամբոխների...  
Ու տագնապով անլուելի, հայեացըներով անթարիթ լարւած,  
նայում են մութ հեռուներին ամբոխները խելագարւած:

Լուրթ աչքերով խորը, տիսուր—մութ են դիտում նրանք անհուն  
ու դժմում է աղմուկը խուլ գիշերային կայարանում...

13.

Հոծ բանակով, հսկայական կայարանի դէմ խոնըւած՝  
լուրթ աչքերով արևակամ—դաշտն են դիտում խաւարամած:

Մութ է դէմը, ու խաւարում, որ բացւել է որպէս անդունդ՝  
երեսում է հեռնւ—հեռնւն կարմիր լոյսով վառւող մի գունզ:  
Այս երի դէմ մթակալւած, հայեացքների դէմ ակընդէտ—  
մառու մթու, այդ վառւած գնւնտ է թւում, կարմիր մի կէտ:  
Գիշեր մէջ, կարմիր, տագնապալից վառւում է նաև  
վառել են, որ ամբողջ աշխարհը իմանա...  
Անծայրածիր մթում հեռւի կարծես կարմիր գլուխ է շան—  
վառել են այն, որպէս կուխ ու տագնապի ազդանշան..

Քաղաքն է այն հազարամեայ, ուր տագնապ ու տեսդ կայ հիմի:  
Պահւել է նա, որպէս վախից խելագարւած մի թշնամի:  
Ու կրակը այդ կարմրակէզ, որ քիչ յետոյ պիտի մարի—  
մի արնագոյն կէտ է կարծես ուղեղի մէջ խելագարի:  
Բոլնկւել է յոյսով յետին, հսկեվարքի տենդով վառւած—  
ու նայում են կարմիր կէտին ամբոխները խելագարւած...

14.

Կիշերի դէմ խաւարամած, աչքերն յառած կարմիր կէտին՝  
ամբոխները խելագարւած սպասում են առաւօտին:

Ու վառւում է խաւարակուռ հոգիներում նրանց անգայթ  
կէտը այդ մուգ, որպէս հեռու, հրաբոսոր մի ձառագայթ:  
Սուր մխւել է նրանց սրտում, որպէս մի թէժ, կարմիր բնեռ—

թոյն է լցնում ու բորբոքում ու երազներ աշխարհաւեր...  
Աղմըկում է նրանց սրտում մորմոքը հին, հազարամեայ  
տենդ է սփռում ու խլրտում նրանց անգայթ սրտում հիմա:  
Լուրթաչքերում վայլում է վառ արիւնամած մի ցանկութիւն—  
ու աչքերը միլիոնաւոր թոյն են թքում, արիւն ու թոյն:  
Բարձրանում է նրանց սրտից տարիների մաղձը աղի—  
ու վառում է լուրթ աչքերում՝ արիւնալից ու կատաղի...  
Ու աչքերը արիւնամած անգարձ յառած կարմիր կէտին՝  
մութ տագնապով անգարձ վառած՝ սպասում հն առաւօտին...

15.

Գիշերի գէմ—գիշեր է մութ խաւարամած նրանց հոգին,  
որ կարօտով մի կրակոտ սպասում է առաւօտին:  
Խաւար է մեծ սիրտը նոցա, բայց խաւարում անծայրածիր—  
երկինքներ կան կապուտ աչեայ, հորիզոններ՝ անծայր, անծիր:  
Ու աչքերում նրանց կապոյտ, ուր իջել է գիշերը մութ—  
հազար բողբոջ կայ կրակոտ, ու արշալոյս, ու առաւօտ:  
Նրանց ձըգւած մկաններում ուժն է նստել խոնաւ հողի—  
եթէ ուզեն՝ արևներին նոր տեմպ կըտան ու նոր ուղի...  
եթէ ուզեն՝ արեգակներ կըշպրտեն երկինքն ի վեր.  
եթէ ուզեն՝ վար կը բերեն երկինքներից արեգակները...  
եթէ ուզեն՝ կամքով արի ու աշխարհի հրով վառւած—  
ինչեր միայն չեն կատարի ամբոխները խելագարւած...

16.

Ու հոսում է գիշերը մութ, մօտենում է առաւօտին:  
Հոսում է պաղ ու անօգուտ սպասումի ժամը յետին:

Դաշտից ահա սուրում է զով, մարմանդ քս մին սռաւօտի—  
ու վառւում է վերջին լոյսով կրակը այն կարմիր կէտի...  
Նօսրանում է խաւարն ահա, գունաւում է հետզհետէ  
խաւարը, որ դաշտի վրայ մի շղարշ է դառնում մութէ:  
Օրօրւում է առաւօտի հովին տւած շղարշը այդ,  
որ յուշ գարձած ցնզի պիտի, երբ բուրնկւի մի ճառագայթ:  
Ու սուրում է հեռուներից առաւօտւայ կիսամըթում—  
մարմանդ, մարմանդ, բուրումնալից, գարնանային մի թարմու-  
թիւն...

Շարժը տում է խսւարը թէն ու հեռեւում խաւարաւած  
երկում է քաղաքն արդէն՝ մութ, անորոշ մի զանգը տած:  
Երկինքն պատերը յաղթ որոշում են հետզհետէ,  
և են ահա հպարտ ծխնելոյզները երկաթէ...

Աւ բորբ սրաւում ամբոխներիթնենդ է առնում կարօտը մառ,  
երկինքներում լուրթ աչքերի վառւում է տենդը հոգեվար...  
Բնրբ աչքերով նայում են մեծ, խաւարակուռ զանգը տածին  
ու վառւում է սիրտը նրանց, որպէս հրդեհ արեգնածին...  
—Պիտի երթան առաջ հիմա, պիտի առնեն քաղաքը մեծ,  
պիտի թափեն նրա վրայ հազարամեայ մաղձը իրենց...  
Քանդեն պիտի ու աւիրեն, տեղը փոշի պիտի փուեն—  
հազարամեայ քաղաքը այդ քանդեն պիտն ու աւերեն...  
Այրեն պիտի, խելազարւած պիտի պարեն հրդեհներում,  
ու կարմրավառ կրակ ու կայծ պիտի փուեն երկրի հեռուն...  
Ու մնացած մոխիրը ձիգ պիտի այրեն նրանք նորից,  
որ կեանքը հին, որպէս փիւնիկ, չըբաարձրանա մոխիրներից...  
Քամուն տալով մոխիրը այն, որ տանի ու յետ չըբերի—  
դէպի հեռուն պիտի երթան գեռ չըծնւած արևների...

կարմիր վառւեց արել հուր, որպէս կուի ազդանշան, —  
 երբ բուընկւեց արևելքում արել՝ նոր լոյսով վառւած —  
 դուրս նետւեցին կայարանից ամբոխները խելագարւած...  
 Դէմը դաշտն էր անծայրածիր, ուր մշուշ էր արեագոյն,  
 ու մշուշում շոգիացող, առաւօտի մարմանդ միգում,  
 կրկեսի պէս մի վիթխարի, խայտաբղէտ, խայտանկար  
 եղերքի մօտ ճանապարհի երեսում էր քաղաքը քար...  
 Աչքերն յառած հեռու-հեռուն կարմիր վառող արգակին՝  
 արեագառ հեռուներում նրանք կուում էին կրկին —  
 հոծ խմբերով հազարանուն, արեգակի հրով վառւած՝  
 դէպի Արեն էին գնում ամբոխները խելագարւած...

Յունիս. 918 թ.



ԾԱԽԻՈՒՄ է ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿԻ

«Ժիածանը» Լիրիկա—Մոսկվա, 917 թ. գինը 1 լ. 50 կ.  
«Սօմա» նոր վեղեան պօէմ—Թիֆլիս, 919 թ. գինը 3 լ.

Թիֆլիս, տպարան «ՊՐՕԴՐԵՍ» և, Պօղոսեան 919 թ.

